

Վ. Գ. Համբարձումյան, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության (համեմատական-տիպաբանական տարբերակայնություն), պրակ 2, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2007, 64 էջ:

Սույն գրքի 1-ին պրակը «Ստուգաբանական հետազոտություններ» ընդհանուր խորագրի տակ, լույս է տեսել ուղիղ տանը տարի առաջ՝ ակադ. Գ. Զահուկյանի խմբագրությամբ, եթե չասենք նաև հորդորով: Այն ամփոփում էր հեղինակի գիտական զեկուցումների և հոդվածների, սեղծ հրապարակումների մի մասը, որոնցում առաջ էին քաշվում հայերենի համեմատական ուսումնասիրության նոր մոտեցումներ, կատարվում էին բառաբանական ճշգրտումներ և լրացումներ, առաջարկվում նոր ստուգաբանություններ: Այդ պրակն արժանացավ մասնագիտական գրախոսության "Annael of Armenian Linguistics" (vol. 19, 1998, pp 85-86, հեղինակ՝ Զ. Գրեպին):

Այժմ 2-րդ պրակը, որ նույնպես լույս է տեսնում նույն խորագրով, նվիրված է համեմատական-տիպաբանական տարբերակայնության (վարիատիվության) հարցին: Յեղիմակը գտնում է, որ հայոց լեզվի համեմատական բառագիտության շատ հարցերի կարելի է անդրադառնալ ոչ միայն համեմատական-տիպաբանական, այլև համեմատական-տարբերակայնության ընդհանուր սկզբունքների հիման վրա, կոնկրետ մոտեցումների կիրառմամբ: Ըստ այդմ գրքում բնարկվում են ոչ միայն տեսական հարցեր, այլև տրվում են առանձին բառերի ստուգաբանություններ:

Գիրքը նախատեսված է բանասերների, պատմաբանների և առհասարակ հայերենի և հայ ժողովրդի հին շրջանի պատմությամբ զբաղվողների և հետաքրքրվողների համար:

Русско-армянский словарь-справочник соматических фразеологизмов (620 единиц), составитель Б. С. Ходжумян, изд.-во ЕГУ, Ереван, 2007, 176 с.

Գիրքն ունի գործնական նպատակադրում, այն է՝ երկլեզվության պայմաններում տեղեկանալ ռուսերեն և հայերեն այն դարձվածային միավորներին, որոնց բաղադրիչներից մեկնումնեկը որպես բաղադրության զերադաս անդամ, մարդու մարմնի որևէ մասի անվանում է: Այն երկլեզվյան համառոտ բացատրական բազմաբայկ է՝ երկու լեզուների նույնաբան յիմավորների ընդգրկմամբ:

Համեմատաբար մեծ թիվ են կազմում այն դարձվածային միավորները, որոնք բաղադրված են լինում մարմնի այն մասերի անվանումներով, որոնք մարդկայագմության տեսակետից ունեն առաջնահերթ նշանակություն, և դա միանգամայն բնական է: Նման դարձվածային միավորները գրքույկում բավականին լուրջ ուշադրության են առնված: Կարևոր առավելություն է նաև այն, որ թե հայերենում և թե ռուսերենում տեղ է հատկացված դարձվածային միավորների հոմանշային շարքերին, որպիսով վեր է հանվում երկու լեզուների հարստությունն այն մակարդակում:

Յեղիմակը հույս է հայտնում, որ իր այս գրքույկը կարող է օգտակար լինել ուսանողությանը, մանավանդ բանասիրական կրթություն ստացողներին կամ մասնագիտացողներին ուսումնառության ընթացքում՝ հայկական և ռուսական բաժիններում, իսկ մենք ավելացնում ենք, որ գրքույկում եղածի յուրացումն անպայման հաջողության հասնելու ճանապարհ է:

Գրական հայերեն և բարբառ (մեթոդական ցուցումներ). կազմող Յ. Յ. Մեսրոպյան, Երևան, «Ճարտարագետ» հրատ., 2008, 44 էջ:

Վերջին տարիներին մեր համապետության տարբեր բուհերում աշխատող, գիտական անհրաժեշտ որակավորում ունեցող շատ մասնագետներ մշակում են առարկայական ծրագրեր, կազմում ուսումնական ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ, որոնք դրվում են գործածության՝ համեմարարված տվյալ բուհի գիտական խորհրդի, այլև հրահանգված համապատասխան նախարարության գիտակրթական կենտրոնի կողմից:

Նման մի գործ է սույն գրքույկը, որը ներառում է մեր գրական լեզվի և բարբառների վերաբերյալ մի շարք տեսական և գործնական հարցեր:

Գրքույկում բավականին հստակ և ամբողջական ձևով ներկայացվում են կարևորագույն գիտելիքներ գրական լեզվի տարբեր գործառնությունների, նրա խոսակցական և բարբառային տարբերակների վերաբերյալ: Ընդ որում որոշակի ուշադրություն է դարձվում հայերենի պետական լեզու լինելու հանգամանքին, բերվում է 33 օրենքը լեզվի մասին, որին ուսանողությունը քիչ հնարավորություն ունի այլ աղբյուրից տեղեկանալու:

Բարբառների վերաբերյալ գիտելիքը գրքույկում զբաղեցնում է համեմատաբար լայն շրջանակ, որովհետև այն հավանաբար եղել է նման մեթոդական ցուցումների կազմման հիմնական առարկան: Գիտելիքների նման ընդգրկումով ավանդումը մեծապես կարող է նպաստել ուսանողների, մանավանդ ճարտարագիտական մասնագիտացում ստացողների մտավոր զարգացմանը հայերենի վերաբերյալ՝ իբրև ազգային մշակույթի անբաժանելի բաղադրիչ:

Այսպես՝ առանձին-առանձին ուշադրության առարկա են բարբառների առանձնահատկությունները, հայ բարբառագիտության զարգացման փուլերը, բարբառների առաջացումը, նրանց քանակը և տարածման սահմանները, դասակարգումը և այլն: Վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկ, որը կարող է աղբյուր հանդիսանալ հիշյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:

Նյութի հաղորդման ամբողջականությամբ, հարցերի քննարկման կոնկրետությամբ և շարադրանքի հստակությամբ ու պարզությամբ աչքի ընկնող սույն գրքույկը կարող է օգտակար լինել հայոց լեզվի հարցերով հետաքրքրվողներին, մասնագետ ուսումնասիրողներին և ընթերցող լայն շրջաններին:

Ս. Ա. Մինասյան, Վ երկրորդական ձևույթը հայերենում, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2008, 112 էջ:

Ուշագրավ իրողություն է այն, որ 33 ԲՈՅ-ի գիտական աստիճաններ շնորհող տարբեր խորհուրդներում համապատասխան թեզ պաշտպանած շատ գիտնականներ՝ գիտաշխատող կամ դասախոս, աշխատելով Արցախի տարբեր բուհերում, գիտակրթականին զուգընթաց լավագույնս ձեռնամուխ են լինում նաև գիտահետազոտական աշխատանքի:

Գրախոսվող աշխատության հեղինակը երկու տասնամյակ առաջ Երևանի մանկավարժական ինստիտուտի գիտական խորհրդում փայլուն ձևով պաշտպանեց թեկնածուական թեզ Դովհանես Շիրազի պոեմների լեզվի և ոճի վերաբերյալ և շարունակաբար աշխատելով Արցախի պետական համալսարանում՝ տարիների ընթացքում գրեց վեց-յոթ գիրք արդի գրական հայերենի տարբեր կողմերի, առանձին գրողների լեզվի և ոճի, մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկային առնչվող հարցերի վերաբերյալ:

Հիշյալ ձևույթը գրքում քննության է առնված ըստ կարգային (կատեգորիալ) քաշի՝ ման իբրև բառահիմք հանդես եկող, քերականական սեռ և կերպ արտահայտող ձևաբանական միավորի բաղադրիչ, նաև իբրև բառակազմական մասնիկ՝ առնված անբացական և այլ կարգի հարաբերությունների մեջ: Այնուհետև հեղինակն անդրադառնում է նման բաղադրություն ունեցող միավորների խոսքիմասային և գործառա-

կան առանձնահատկություններին: Զննությունը կատարված է շուրջ երկու հազար բառային միավորների հիման վրա, որոնցից հազար յոթ հարյուրից ավելին նշվում է գրքի վերջում բերվող ցանկի ձևով:

Աշխատանքը գրված է լավագույն գրականության օգտագործմամբ, շարադրանքը, չհաշված երբեմն տեղ գտած հապճեպությունն ու զգացականությունը, գիտական է, ուստի այն կարող է օգտակար լինել ոչ միայն ուսանողությանը, այլև հայոց լեզվի մասնագետներին նմանօրինակ ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու, ինչպես նաև դասախոսական աշխատանքի ընթացքում:

Ա. Ռ. Գագինյան, Յոգեֆ Կարստի լեզվաբանական հայացքները, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, 152 էջ:

Գերմանացի հայերենագետների մեջ իր անժխտելի տեղն ունի Ժամանակին միջին հայերենի լավագույն ուսումնասիրող Յոգեֆ Կարստը (1871–1962 թթ.): Նա հեղինակ է հայ բանասիրությանը, իրավունքին, ազգաբանությանը և հարակից այլ հարցերին նվիրված արժեքավոր ուսումնասիրությունների: Վերջերս հայերեն լույս տեսավ Կարստի գերմաներեն գրված «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» (Երևան, 2002) ծավալուն գիրքը, որն այսօր նա այդ բնագավառի լավագույն ուսումնասիրություններից մեկն է, իսկ նրա կազմած «Միջին հայերենի բառարանի» ձեռագիրը (անավարտ) պահվում է Երևանի Սատենադարանի ֆոնդերում:

Կարստի լեզվագիտական, մանավանդ իր տերմինով՝ «ալարոդյան» տեսությունը, որն իր շրջագծի մեջ էր առել ցեղակից և ոչ ցեղակից լեզուներ, գրեթե միշտ եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Սակայն առ այսօր մեզանում բացակայում էր նրա լեզվաբանական, հատկապես հայերենագիտական հայացքներին, ավելի լայն՝ պատմաբանասիրական գործունեությանը նվիրված առանձին ուսումնասիրություն:

Ա. Ռ. Գագինյանի սույն աշխատությունը, որը ժամանակին ներկայացված է եղել որպես թեկնածուական առենախոսություն և ըստ այդմ արժանացել բարձր գնահատության, գալիս է լիովին լրացնելու այդ բացը:

Աշխատության ներածության մեջ և երկու գլուխներում, որոնք ունեն առանձին վերնագրերով մասեր, բնության են առնված Կարստի գիտական գործունեությունը, մասնավորապես նրա ընդհանուր լեզվաբանական հայացքների և համեմատաբանական բնությունների կարևորությունը ժամանակի և մեր օրերի լեզվաբանության մեջ, իսկ ավելի մանրամասն և առանձին՝ հայագիտական ժառանգությունը: Վերջին դեպքում գնահատելի ուշադրության առարկա են դարձել Կարստի լեզվաբանական հայացքների մեջ միջին հայերենի խաղացած դերի, հին և միջին հայերենի բարբառային տարբերակվածության հարցերը, որոնք ստացել են որոշակի լուծում:

Ա. Գագինյանը գրեթե սպառիչ վերլուծության է առնում Կարստի «ալարոդյան» տեսությունը՝ կապված հատկապես հայոց լեզվի ծագման և նրա բաղադրիչների բնույթի հետ:

Աշխատությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով, արդի լեզվաբանական գրականության տեղին օգտագործմամբ, ուստի այն կարևոր ներդրում է հայ լեզվաբանության պատմության ուսումնասիրության բնագավառում:

Ջահուկյանական ընթերցումներ – 2008. Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, մայիսի 7–8, 2008թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2008, 190 էջ:

Արդեն երրորդ տարին է, որ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը կազմակերպում է հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված մեր օրերի հայականավոր լեզվաբան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանի (1920–2005 թթ.) հիշատակին:

Կարդացվել է երկու տասնյակ զեկուցում, հանդես են եկել ինչպես 33 զԱՍ լեզվի, հնազանդության և ազգագրության, Վանաձորի 3ովի Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտների, այնպես էլ Երևանի, Չավառի, Ռուս-հայկական (սլավոնական) պետական և Վ. Բրյուսովի անվ. լեզվաբանական համալսարանների գիտնականներ:

Բազմազան է եղել զեկուցումների թեմատիկան՝ համեմատական և կիրառական լեզվաբանություն, լեզվի պատմություն, բարբառագիտություն, տերմինաբանություն, ժամանակակից հայերեն:

Ընդ որում ինը զեկուցում նվիրված է եղել բարբառագիտական այս կամ այն հարցի քննարկմանը՝ *արոր, որմնախորշ, տեր և օժիտ բառ*—հասկացությունների բարբառային արտացոլումներին (Ա. Աբրահամյան, Ա. Գրիգորյան, 3. Խաչատրյան, 3. Սեսերոսյան և Ա. Գրիգորյան), ցուցական դերանուններին, բայի անդեմ ձևերի և առկայացման կարգի ձևախմբատային դրսևորումներին (Ջ. Բառնասյան, Գ. Գևորգյան, Ժ. Միքայելյան), այլև մեկ առանձին խոսվածքի վերաբերյալ լրացուցիչ տվյալների մատնանշմանը, հայերենին առհասարակ բնորոշ հատկանիշների հիման վրա մի խումբ բարբառների քննազորմանը (Շ. Սսխբեկյան, Վ. Կատվալյան): Այստեղ հիշատակելի է նաև հայերենի բարբառների տառադարձական տարբերակմանը նվիրված զեկուցումը (Ռ. Ուռուտյան):

Կային ժամանակակից հայերենի խնդրատական կապակցումների սխալ դրսևորման, տեղանվանակերտ կենսունակ ածանցների, պակասավոր բայերի, կապերի վերաբերյալ զեկուցումներ (Ա. Բարսեղյան, Ն. Դիլբարյան, Ա. Սանթրյան, Ս. Տիոյան):

Ձեկուցումների մի մասն էլ նվիրված էր հայերենի բառապաշարի մեջ, այսպես կոչված, «արևելահորանական միջնաշերտի» որոշ տվյալների վերհամեմանը, լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշներին, հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներին ու սկզբունքներին, երաժշտական որոշ տերմինների քննությանը, ասորերենից փոխառյալ մի քանի կրոնական տերմինների իմաստափոխությանը (Տ. Ղալալյան, Վ. 3ամբարձումյան, Լ. 3ովսեփյան, Գ. Սխիթարյան, Ա. Պապիկյան), ինչպես նաև փորձ էր արվում, որոշ սկզբունքներից ելնելով, «վերադասակարգելու» հին հայերենի բայերի համակարգը (Վ. Ջիհանյան):

Ձեկուցումների շուրջ հաճախ ծավալվում էր գիտական լուրջ քննարկում: Այս նստաշրջանը ես ցույց տվեց, որ հայերենագիտության ներկայիս օրերին նույնպես կարելի է ձեռնամուխ լինել հետազոտական աշխատանքի և հասնել որոշակի արդյունքի: